

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/3

12 հուլիսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Իսկանդար Մելիքյանի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2118716 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Իսկանդար Մելիքյանի դիմում-գագատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ի կողմից 24.06.2013 թ-ին կազմված թիվ 2118716 ակտի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

Չարենցավան 3 թաղ., 33 շենքի հարևանությամբ գործում է լավաշի թխման արտադրամաս, որը պատկանում է ինձ՝ Իսկանդար Մելիքյանիս: Շաբաթական երկու անգամ այդ արտադրամասում թխում եմ լավաշ, որը հաշիվ-ապրանքագրերով մատակարարում եմ Չարենցավանի չորս փոքր կրպակների: Իմ կողմից մատակարարվող լավաշի համար դուրս գրված հաշիվ-ապրանքագրերը գրանցվում են հարկային տեսչության կողմից հաստատված առաքվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) գրքում: Լավաշի թխման արտադրամասից երբևէ նույնիսկ մեկ հատիկ լավաշ չի վաճառվել (մանրածախ): Ակտի նախագիծը կազմելուց մի քանի օր առաջ հարկային տեսչության երկու աշխատողներ եկել են տվյալ պահին փակ արտադրամաս, տնից ինձ կանչել և խնդրել բացել արտադրամասը զննելու և ծանոթանալու նպատակով: Հարցրել են, արդյոք արտադրամասից առևտուր կատարում եմ, թե՛ ոչ: Պատասխանել եմ, որ արտադրամասից առևտուր չեմ կատարում, քանի որ լավաշը վաճառում եմ իմ առևտրի կետից՝ Չարենցավան 2-րդ թաղամաս, 1-ին շենքում գործող խանութից, որտեղ տեղադրված է ՀԴՄ: ՏՀՏ աշխատակիցներն այնուհետև հայտարարել են, որ երկու օր առաջ ինչ-որ մեկին վաճառել եմ լավաշ՝ առանց ՀԴՄ կտրոնի: Ես պահանջել եմ, որ նրանք ցույց տան արձանագրությունը, որտեղ ներկայացված են գործարքի մանրամասները, որը, բնականաբար, չներկայացվեց, քանի որ նման վաճառք չէր կարող արձանագրվել: ՏՀՏ աշխատակիցները սկսեցին ինձ համոզել, որ ես համաձայնվեմ ՀԴՄ-ի ակտ կազմելու հետ, որ իբր առանց ՀԴՄ-ի կիրառման իրականացրել եմ լավաշի վաճառք: Բնական է, քանի որ դա չէր համապատասխանում իրականությանը ես չեմ համաձայնվել: Նրանք համոզելու համար նույնիսկ ասացին, որ այդ դեպքում ՀԴՄ-ի ակտն ավելի մեղմ պատիժ է նախատեսում, քան արտադրամասից վաճառքի իրականացումը, որտեղ ՀԴՄ տեղադրված չէ: Ես այդ առաջարկին նույնպես չեմ համաձայնվել: Դրանից հետո նրանք հեռացել են առանց որևէ ակտ կամ ակտի նախագիծ ներկայացնելու: Շեշտում եմ, որ ոչ այդ պահին, ոչ էլ դրանից առաջ կամ հետո ոչ ոքի արտադրամասից լավաշ չի վաճառվել:

Սույն թվականի հունիսի 18-ին Հրազդանի ՏՀՏ-ից ստացել եմ Ակտ, որտեղ պակասում է շինծու վաճառքի Արձանագրությունը:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Ա/Ձ Իսկանդար Մելիքյանը խնդրում է չեղյալ համարել Հրազդանի ՏՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2118716 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Իսկանդար Մելիքյանի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձի ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 23.05.2013 թ-ի թիվ 2118716 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Իսկանդար Մելիքյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և հսկիչ-դրամարկղային

մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2118716 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 300.000 դրամ:

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է.

Քաղաքացի Բագրատ Մուրադյանը 03.06.2013 թ-ին ք.Չարենցավան, 3-րդ թաղամաս, 33 շենքի հարևանությամբ գործող արտադրամասի վաճառքի կետից կատարեց գնում 300 դրամ ընդհանուր արժողությամբ՝ մեկ փաթեթ լավաշ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ստուգում իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել է ՀՀ սկիզբ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի և 5-րդ հոդվածի դրույթները, որն էլ առաջացնում է պատասխանատվություն նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետով տուգանք՝ 300.000 դրամի չափով:

ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսվարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ակտի նախագիծը կազմվել է 17.06.2013 թ-ին և փոստային առաքմամբ 18.06.2013 թ-ին ուղարկվել է Ա/Ձ Իսկանդար Մելիքյանին: Ստուգման ակտի նախագիծը վերջինիս կողմից ստացվել է նույն օրը՝ 18.06.2013 թ-ին:

Հաշվի առնելով ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում ակտի նախագիծը ուսումնասիրելու ժամկետը, ստուգման ակտը պետք է կազմվեր ոչ թե 24.06.2013 թ-ին, այլ՝ 25.06.2013 թ-ին:

Այսինքն, քննարկվող դեպքում խախտվել է ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի հետևանքով տնտեսվարող սուբյեկտը զրկվել է ստուգման ակտի նախագիծն ուսումնասիրելու և դրա վերաբերյալ առարկություններ ներկայացնելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավորությունից:

Բացի այդ, հարկ է նշել նաև ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկ այլ դրույթի վերաբերյալ: Մասնավորապես, նշված օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է. <Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Վերոգրյալ իրավանդորմի դրույթներից հետևում է, որ ստուգման ակտը ստորագրվում է ստուգում իրականացնող պաշտոնատար անձի (կամ անձանց) կողմից: Սակայն, քննարկվող

դեպքում ստուգման ակտը ստորագրված է նաև գնումը կատարած անձի՝ քաղաքացի Բագրատ Մուրադյանի կողմից, ինչն ըստ էության <<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտում է:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2118716 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

